

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հունիս 2024 | N° 1

Քաղաքական
համառոտագրում
տեղ գտած
կարծիքների
համընկումը
Ֆրիդրիխ Նաումանի
«Հանուն
ազատության»
հիմնադրամի հետ
պարտադիր չէ:

Ակադեմիական քաղաքի «ուրվականը». արդյո՞ք ընտրված է քաղաքականության լավագույն տարբերակը

Սկսած 1950-ականներից ամերիկացի տնտեսագետ (հետագայում Նոբելյան մրցանակակիր, 1987թ) [Ռոբերտ Սոլոու](#) իր Նոր տեսությունով՝ տնտեսական աճի Սոլոուի մոդելով, հետևողականորեն քարոզում էր, որ կայուն և հարատև տնտեսական աճ ունենալու համար երկրները պետք է ներդրումներ կատարեն գիտատեխնիկական առաջընթացի (այդ թվում՝ բարձրագույն կրթության) մեջ: Մեր օրերում դա կարծես թե կասկածից վեր է. ավելին, վերջին ուսումնասիրությունները փաստում են, որ 1995-2021թթ-ին տնտեսապես առավել զարգացած ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթության նպաստումը **1%** տնտեսական աճի կառուցվածքում եղել է մոտ **0.1%-ային կետ**: Այս առումով ողջունելի է, որ Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է բարձրագույն կրթության և գիտության ոլորտի լայնածավալ բարեփոխումներ, սակայն շարունակում է վիճելի մնալ, այսպես կոչված, «**ակադեմիական քաղաքի**» գաղափարը: Սույն քաղաքականության համառոտագրի նպատակն է անդրադառնալ այդ հարցին՝ նկարագրելով ընթացիկ վիճակը, զուգահեռներ տանելով միջազգային փորձի հետ, ինչպես նաև ներկայացնել գործոն առաջարկություններ քաղաքականություն մշակողներին:




Ի՞նչ է կատարվում Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության ոլորտում. միջազգային համեմատականներ

Սովորողների թիվը կրճատվում է, ընդգրկվածության մակարդակը բարձրանում, իսկ բուհ ընդունման որակական շեմը՝ նվազում: Այսպես, 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում բարձրագույն կրթության առաջին (բակալավրիատ) և երկրորդ (մագիստրատուրա) մակարդակներում սովորում էին 100,854 սովորող, իսկ 2022-2023-ին՝ **79,513**, այսինքն՝ դիտարկվող ժամանակահատվածում սովորողների թիվը կրճատվել է շուրջ 21 հազարով կամ **21%-ով**: Սովորողների բացարձակ թվի այսպիսի անկման հիմնական պատճառը թերևս համապատասխան տարիքային խմբի բնակչության թվի նվազումն

է, ինչն իր հերթին արհեստականորեն հանգեցրել է նրան, որ բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության մակարդակը 2013թ-ի 42%-ից 2023թ-ին հասնի **60%-ի**: Միևնույն ժամանակ, վերջին 10 տարվա ընթացքում պետական բուհերում կրթության առաջին մակարդակին հատկացված ուսման տեղերի թիվը կրճատվել է ընդամենը **10%-ով**, ինչն իր հերթին հանգեցրել է բուհ ընդունման որակական շեմի նվազման: Այլ կերպ ասած, ավելի թույլ պատրաստվածություն ունեցող ուսանողները հնարավորություն են ստացել սովորելու բուհերում:

Կրթական ծառայությունների առաջարկը զգալիորեն գերազանցում է պահանջարկը

Գծապատկեր 1. Հայաստանի բուհերում սովորողների թիվը և ընդգրկվածության մակարդակը, 2013-2023 թթ.




Աղբյուր՝ Արմատատ, Համաշխարհային բանկ

Այդուհանդերձ, բարձրագույն կրթության համակարգում բնակչության ընդգրկվածության մակարդակով **Հայաստանը (60%)** շարունակում է զգալիորեն գիջել այնպիսի երկրների, ինչպիսիք են

Լատվիան (93%), Ռուսաստանը (83%), Վրաստանը (79%), Բուլղարիան (74%), Էստոնիան (73%), Լիտվան (72%), Լեհաստանը (71%) և այլն:

Գծապատկեր 2. Բարձրագույն կրթության համակարգում ուսանողների ընդգրկածությունը վերջին հասանելի տվյալներով




Աղբյուր՝ Համաշխարհային բանկ

Հայաստանում համապատասխան տարիքի 10 անձից 6-ը սովորում է բուհում

Հատկանշական է, որ վերջին տարիներին կառավարությունը հետևողականորեն ավելացնում է բարձրագույն կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջեի միջոցները: Այսպես, 2024թ-ին կառավարությունը ծրագրել է բարձրագույն կրթության ոլորտին հատկացնել **13 միլիարդ 494 միլիոն դրամ**, ինչը 1.7 միլիարդ դրամով կամ 14.6%-ով ավել է,

քան 2023թ-ին և 3.6 միլիարդ դրամով կամ 36.3%-ով ավել, քան 2020թ-ին: Այնուամենայնիվ պետք է նշել, որ չնայած բացարձակ արտահայտությամբ ոլորտին հատկացվող միջոցները ավելացել են, թե՛ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում և թե՛ երկրի ՀՆԱ նկատմամբ դրանք գրեթե մնացել են անփոփոխ, նույնիսկ փոքր-ինչ նվազել են:

Գծապատկեր 3. Բարձրագույն կրթության գծով պետական բյուջեի ծախսերը Հայաստանում, 2020-2024թթ.




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, Արմատա

2023թ-ին գիտությանը հատկացված 1000 դրամից փաստացի ծախսվել է 758 դրամը

Գիտական և գիտատեխնիկական ոլորտին ուղղվող ծախսերը ևս վերջին տարիներին ավելացվել են, ընդ որում՝ այս գծով ծախսերը աճել են, սակայն կատարողականը մտահոգիչ է: Այսպես, 2023թ-ին կառավարությունը ծրագրում էր գիտական և գիտատեխնիկական ոլորտին (առանց ռազմական նշանա-

կության գիտական ծախսերի) հատկացնել շուրջ 30 միլիարդ դրամ, սակայն փաստացի ծախսել է մոտ 23 միլիարդ դրամ: 2024թ-ի պետական բյուջեով նախատեսվում է գիտության ոլորտին հատկացնել 36 միլիարդ դրամ, ինչը 58.2%-ով ավել է, քան 2023թ-ին և 2.7 անգամ ավել, քան 2020-ին:

Գծապատկեր 4. Գիտության գծով պետական բյուջեի ծախսերը Հայաստանում, 2020-2024թթ.




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, Արմատատ

Չնայած ոլորտի աճող ֆինանսավորմանը Հայաստանում գիտության ոլորտի աշխատողների թիվը վերջին տարիներին շարունակում է նվազել: 2022 թվականին Հայաստանում գիտության ոլորտի աշխատողների թիվը կազմում էր 4,864, ինչը շուրջ 26.0%-ով կամ 1,694-ով պակաս է, քան 2010թ:

Ընդ որում այս անկումը տեղի է ունեցել մասնագետ-հետազոտողների թվաքանակի նվազման պատճառով: Երկրում 2010-2022 թթ. ընթացքում գիտության ոլորտում մասնագետ-հետազոտողների թիվը կրճատվել է 24.3%-ով կամ 1,209 աշխատողով:

Գծապատկեր 5. Գիտության ոլորտի աշխատողների թվաքանակը Հայաստանում, 2010-2022թթ.




Աղբյուր՝ Արմատատ

Չնայած բարձրագույն կրթության, ինչպես նաև գիտության ոլորտի պետական ֆինանսավորման շարունակական աճին՝ Հայաստանի բուհերը բավարար չափով ներկայացված չեն աշխարհի համալսարանների վարկանիշային աղյուսակներում: Օրինակ, 2023-2024թթ-ի ուսումնական տարվա տվյալների համաձայն Հայաստանում գործում է **60 համալսարան** (ներառյալ արտերկրի համալսարանները), որոնցից

2024թ. **QS World University Rankings** աշխարհի համալսարանների վարկանիշային աղյուսակում ընդգրկված է միայն 1 ազգային համալսարան: Համեմատության համար նշենք, որ Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում, Բելառուսում, որտեղ գործող բուհերի քանակը ավելի քիչ է, քան Հայաստանում, QS World University Rankings վարկանիշային աղյուսակում ընդգրկված են ավելի շատ ազգային համալսարաններ:

Գծապատկեր 6. Հայաստանում և մի շարք երկրներում գործող բուհերի քանակը



Աղբյուր՝ համապատասխան երկրների ազգային վիճակագրություն և QS World University Rankings

Այսպիսով, բարձրագույն կրթության ոլորտում մի շարք ցուցանիշների առումով, ինչպես օրինակ՝ բարձրագույն կրթության համակարգում ուսանողների ընդգրկվածությամբ, գիտնականների թվով և միջազգային հեղինակավոր վարկանիշային աղյուսակներում համալսարանների ընդգրկվածությամբ, Հայաստանը շարունակում է հետ մնալ

դիտարկվող երկրներից կամ հետընթաց արձանագրել իր վերջին տարիների արդյունքների համեմատ:

Ակնհայտ է, որ ոլորտը բարեփոխումների կարիք ունի, սակայն գլխավոր հարցը մնում է այն, թե ինչպես և ինչ ուղղություններով պետք է այդ բարեփոխումները իրականացվեն

Ի՞նչ է ենթադրում Ակադեմիական քաղաքը

«Ակադեմիական քաղաքի» առաջին հիշատակումը նորմատիվ իրավական փաստաթղթերում հայտնվել է 2022թ-ի նոյեմբերին, երբ ընդունվել է կրթության զարգացման մինչև 2030թ-ի պետական ծրագիրը: Մասնավորապես, կրթության արդյունավետության բարձրացման նըպատակով նախատեսվել է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Այդ գաղափարը իր տեղն է գտել նաև պետական ծրագրից բխող գործողությունների ծրագրում՝ դառնալով բարձրագույն կրթության բարեփոխման 7 ենթանպատակներից մեկի՝ ցանցային կրթական համակարգերի ներդրման և ենթակառուցվածքների բարելավման ենթանպատակի, ապահովման միջոց: Արդյունքում նախատեսվում է ունենալ 100% պետական ֆինանսավորմամբ մինչև 8 բուհ, միջազգային հեղինակավոր վարկանիշներում 4 համալսարան և արտասահմանյան ուսանողների թվի կրկնապատկում:


գարյանի անվան «Յայֆիլմ» կինոստուդիայի պահեստային տեղամասում: Ընդ որում՝ տարածքի 80%-ից ավելին հանդիսանում է կամ պետական, կամ համայնքային սեփականություն, 16%-ը պատկանում է մասնավոր սեփականատերերի, իսկ 4%-ը առանց սեփականության իրավունքի պետական գրանցման փաստացիորեն տնօրինվում է մի շարք քաղաքացիների կողմից: Նախատեսվում է, որ Ակադեմիական քաղաքում ֆիզիկապես տեղակայվելու է մինչև 16 բուհ՝ մինչև ութ պետական խոշորացված բուհ և մինչև ութ մասնավոր կամ միջազգային, ինչպես նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, «Ակադեմիական քաղաքի» կառավարող մարմին-հիմնադրամը, ոլորտին առնչվող այլ կառույցներ:

Նախագծի իրականացման առաջին փուլում նախատեսվում է ձևավորել չորս կլաստեր՝ տեխնոլոգիական, արվեստների, կրթական, սպայական, որտեղ կաշխատեն/կսովորեն ընդհանուր թվով շուրջ 44 հազար անձ, որոնց մի մասին կամպուսային տարածքներում անհրաժեշտ է լինելու ապահովել կամ հանրակացարանային տարածքով (ուսանողներ, կրտսեր հետազոտողներ և դասախոսներ), կամ ծառայողական բնակարաններով (հիմնական դասախոսներ և ավագ մակարդակի հետազոտողներ):

Աղյուսակ 1. Կլաստերների ռեզիդենտների քանակը

Կլաստեր	Աշխատող	Ուսանող	Աշակերտ
Տեխնոլոգիական	3,000	14,500	500
Արվեստների	900	2000	200
Կրթական	1400	15,000	
Սպայական			
Ընդհանուր		44,000	

Համաձայն Ակադեմիական քաղաքի հայեցակարգի՝ նախագծման փուլը նախատեսվում է ավարտել 2025թ-ի սեպտեմբերին, որին կհաջորդի շինարարության փուլը՝ մինչև 2029թ-ի դեկտեմբեր, իսկ շահագործումը սկսվի 2030թ-ից:



Ակադեմիական քաղաք

«Ակադեմիական քաղաքը» իրենից ներկայացնում է 700 հա մակերեսով տարածք (ընդհանուր թվով 95 հողակտորներ)՝ տեղակայված Երևանի հյուսիս-արևմուտքում՝ 17-րդ թաղամասին հարող տարածքում և Համո Բեկևա-

Արդյո՞ք Ֆինանսական հնարավորություն- ները համընկնում են ցանկություններին

2023թ-ի մարտի 16-ին Կառավարության որոշմամբ հաստատվել է Կրթության մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրից բխող գործողությունների ծրագիրը, որտեղ ամրագրված է, որ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հարցը պետք է քննարկվի տվյալ տարվա բյուջետային գործընթացի շրջանակում, ավելին՝ որևէ հրապարակային փաստաթղթում չկա ֆինանսական գնահատական, թե այդ ամբողջ ծրագրի իրականացումը ինչ է արժենալու պետությանը:

Նույն մոտեցումը իր հայելային արտահայտությունն է գտել նաև Ակադեմիական քաղաքի ներդրումների մեծության գնահատման հարցում՝ պետական կառույցների կողմից չկա որևէ մոտավոր գնահատական ֆինանսական ծախսերի մեծության վերաբերյալ: Առանձին փորձագետներ [նշում են](#), որ խոսքը կարող է գնալ մի քանի միլիարդ դոլարի մասին: Ավելին, միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաճախ նմանատիպ մեզապրոյեկտներում փաստացի ծախսերը հաճախ զգալիորեն գերազանցում են նախնական պլանավորածը:

2024թ-ի բյուջեի, ինչպես նաև 2025-2027թթ-ի ՄԺԾԾ-ի նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պետբյուջեից ֆինանսավորումը նախատեսված է հետևյալ համամասնությամբ: Այլ կերպ ասած, այս պահի դրությամբ նախագծումը և շինարարների ընտրությունը նախատեսվում է, որ կտևի մինչև 2026թ-ը, իսկ բուն շինարարությունը կսկսվի 2027թ-ից:

Աղյուսակ 2. Ակադեմիական քաղաքի ֆինանսավորումը 2024-2027թթ-ին

	2024 (այլան)	2025 (այլան)	2026 (այլան)	2027 (այլան)
Պետական բյուջեից ֆինանսավորումը, մլն դրամ	1,057.32	2,114.8	5,023.52	240,292.81

Այսինքն, մենք քիչ հավանական ենք համարում, որ 2027թ-ին պետական բյուջեի ծախսային մասի 6%-ը կուղղվի միայն այս նախագծին, թեև, հաշվի առնելով սպասվող տնտեսական դժվարությունները, չի բացառվում, որ այդպիսի լայնամասշտաբ կապիտալ ծախսեր կարող են իրականացվել միջազգային ֆինանսական հաստատությունների օժանդակությամբ տնտեսության խթանման նպատակով: Այդուհանդերձ, ֆինանսավորման մեխանիզմների հարցը մեծ հաշվով դեռևս բաց է մնում: Իր մի շարք ելույթներում

«Սկոլկովո» նորարարական կենտրոն

2013թ-ին Ռուսաստանի Դաշնության կառավարությունը որոշում էր ընդունել 400 հեկտարի վրա 7 տարվա ընթացքում կառուցել «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնը, որտեղ տեղակայվելու էին գիտական և կրթական հաստատություններ, բարձր տեխնոլոգիական արտադրություններ, գրասենյակային տարածքներ և այլն: Ի սկզբանե, նախագծի արժեքի պետական ֆինանսավորման մասը գնահատվում էր շուրջ 132 մլրդ ռուբլի (շուրջ \$4.2 միլիարդ), մոտ այդքան էլ ներդրում ակնկալվում էր ներգրավել մասնավոր հատվածից: Սակայն նախագիծը ձգձգվել է մինչև 2024թ, մինչդեռ պետական ֆինանսավորման չափը արդեն իսկ հասել է 177 միլիարդ ռուբլու, իսկ մասնավոր ներդրումների արժեքը՝ 570 միլիարդ ռուբլու:

Մոտավորապես դա նման է նրան, որ մի մարդ գնա ավտոմեքենաների վաճառարան, պատվիրի Ferrari 812 GTS-ի մոդելի ավտոմեքենա՝ առանց իմանալու արժեքը

վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ դիտարկում են պետական բուհերի ներկայիս տարածքները կառավարման հանձնել մասնագիտացված օպերատորի և դրանից ստացվող եկամուտներն ուղղել այս նախագծին, սակայն դա հնարավոր չէ իրականացնել մինչև 2030թ-ը, իսկ դրանից հետո այդ ծավալի անշարժ գույքը վերապրոֆիլավորելը և շահագործման հանձնելը առնվազն մի քանի տարի կպահանջի, եթե նույնիսկ ընդունենք, որ բավարար պահանջարկ կլինի:

Ակադեմիական քաղաքները աշխարհում

Ակադեմիական քաղաքները կամ կրթական կլաստերներն աշխարհի տարբեր երկրներում սովորաբար ծառայում են մի քանի հիմնական նպատակների: Դրանք հիմնականում նպատակ ունեն խթանելու գիտահետազոտական աշխատանքները, ինչպես նաև կարող են միտված լինել մեկ տեղում համախմբելու միջազգային հեղինակավոր բուհերի մասնաճյուղերը՝ ապահովելով գրավիչ կրթական միջավայր տեղացի և օտարազգի ուսանողների համար:

Օրինակ՝ առաջին նպատակին են ծառայում ճապոնիայի Ծուկուբա գիտական քաղաքը (Tsukuba Science) և Թայվանի Սինչժու գիտական պարկը (Hsinchu Science Park): Այս կրթական կլաստերներում բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական և տեխնոլոգիական ընկերու-

թյունների մոտիկությունը թույլ է տալիս խթանել համագործակցությունը՝ նպաստելով գիտելիքների փոխանակմանը, համատեղ հետազոտական նախագծերի իրականացմանը և ընդհանուր առմամբ դինամիկ գիտական համայնքի ձևավորմանը:

Երկրորդ նպատակին են ծառայում Կատարի կրթական քաղաքը (Education City in Qatar), Դուբայի միջազգային ակադեմիական քաղաքը (Dubai International Academic City (DIAC)), Պենանգի կրթական քաղաքը Մալայզիայում (Education City in Penang):



Դուբայի միջազգային ակադեմիական քաղաքը

Այս կրթական կլաստերները միավորում են տարբեր միջազգային հեղինակավոր համալսարանների մասնաճյուղեր: Օրինակ, Կատարի կրթական քաղաքում տեղակայված են Կարնեգի Մելոն համալսարանը, Ջորջթաունի համալսարանը, Տեխասի A&M համալսարանը և այլն:

Աշխարհում կան նաև այլ պրակտիկաներ, երբ օրինակ քաղաքի որևէ մեկ թաղամասում կենտրոնացված են որոշ թվով բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես օրինակ Մադրիդում (The Ciudad Universitaria), Փարիզում (The Latin Quarter), Պեկինում (Haidian District) և այլն: Այնուամենայնիվ, պետք է նկատել որ նշված օրինակներից ոչ մեկը չի բացառում դրա տարածքից դուրս բարձրագույն ուսումնական հաստատությունների առկայությունը:



Ճապոնիայի Ծուկուբա գիտական քաղաքը

Բարձրագույն կրթության և գիտության զարգացման ֆոկուսը Հայաստանում և աշխարհում

Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխման ռազմավարական նպատակը և ենթանպատակները սահմանված են «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում» և դրանից բխող գործողությունների ծրագրում:

Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարական նպատակը և ենթանպատակները

Յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը



Կառավարական խզվածք Նպատակների, միջոցների և թիրախների միջև

Ընդհանուր առմամբ, այդ նպատակները համընկնում են [Համաշխարհային բանկի](#) և [ԵՄ](#) մոտեցումներին, սակայն հիմնական հարցը ֆոկուսն է. բարձր սևեռվածությունը ռազմավարական նպատակներից մեկին ստվերում է մյուսների կարևորությունը և սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պարագայում հարցականի տակ դնում դրանց իրագործումը: Ավելին, առանձին դեպքում առկա է ռազմավարական խզվածք նպատակների, թիրախների և միջոցների միջև: Օրինակ՝ Ակադեմիական քաղաքի նախագծի միջոցով որպես արդյունք ակնկալվում է հասնել երեք թիրախի՝ 8 խոշորացված պետական բուհ, 4 համալսարան հայտնի վարկանիշային աղյուսակների առաջին 500-ի ցանկում և արտասահմանյան ուսանողների կրկնապատկում, այնինչ ինքնին այս միջոցով հնարավոր չէ հասնել վերջին երկու թիրախների իրականացմանը, քանի որ բարեկարգ ենթակառուցվածքների գործունե փոքր մասնաբաժին ունի միջազգային հայտնի վարկանիշային աղյուսակների մեթոդաբանության մեջ, իսկ միջազգային ուսանողներ ներգրավելու համար վերջինս անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Բացի այդ, կարևոր է նաև ժամանակային լազի գործունե. եթե նույնիսկ մի պահ վերացարկվենք և ընդունենք, որ միջոցը ուղղակիորեն ապահովում է բոլոր թիրախների իրա-

գործումը, 2030թ-ին միաժամանակ ունենալ ակադեմիական քաղաք և միջազգային ուսանողների թվի կրկնապատկում, անհնար է: Անդրադառնալով Ակադեմիական քաղաքին վերաբերող՝ «ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» ենթանպատակին և զուգահեռներ տանելով միջազգային փորձի հետ՝ պետք է նշել, որ այսպիսի նպատակ սահմանված է նաև այլ երկրներում, սակայն դրանք գլխավորապես վերաբերում են վիրտուալ միջբուհային հարթակների, վիրտուալ կամպուսների ձևավորմանը և բուհերում թվային ենթակառուցվածքների զարգացմանը ([ԵՄ](#), [Իռլանդիա](#))՝ լուծելով բուհերի անհավասար կարողությունների և ընձեռած հնարավորությունների խնդիրը, ապահովելով ռեսուրսների մեծ հասանելիություն, ինչպես նաև գիտնականների, դասախոսների ու ուսանողների միջև համագործակցության ավելի մեծ հնարավորություններ: Ցանցային ենթակառուցվածքների ընձեռած հնարավորություններից օգտվելու համար տարբեր երկրներ իրենց բարձրագույն կրթական համակարգերի բարելավման կենտրոնում են դրել նաև դասախոսների ու ուսանողների շրջանում թվային հմտությունների և բուհերում թվային գործընթացների արագ տեմպերով զարգացումը (Լատվիա, Էստոնիա):

Եվրամիություն

ԵՄ անդամ երկրները ևս վերջին տարիներին ձեռնամուխ են եղել բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխմանը: Մասնավորապես, 2022թ-ին Եվրոպական հանձնաժողովը ընդունել է [մի շարք](#) իրավական ակտեր, որտեղ սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների բարելավման համընդհանուր սկզբունքներ և մոտեցումներ, որոնցով ԵՄ անդամ երկրները պետք է առաջնորդվեն գալիք տարիների ընթացքում բարձրագույն կրթության բնագավառում բարեփոխումները իրականացնելիս: Ընդհանուր առմամբ այդ բարեփոխումները պետք է հենված լինեն չորս հենասյուների վրա, այդ թվում՝

- բուհերի միջև միջազգային համագործակցության ակտիվացում,
- երկրների միջև բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության աշխուժացում,
- ապագային միտված հմտությունների զարգացում բուհերում,
- բուհերի կենտրոնական դերակատարություն տնտեսությունների տեխնոլոգիական փոխակերպման և կայուն զարգացման գործընթացում:

Թվային ենթակառուցվածքների և համապատասխան հմտությունների զարգացումը նաև գտնվում է ԵՄ բարձրագույն կրթության համակարգի բարելավման ծրագրերի կենտրոնում: 2020թ-ին ընդունված Թվային կրթության զարգացման գործողությունների ծրագրով

(2021-2027) ԵՄ-ն [վերանայել է](#) բարձրագույն կրթության թվայնացման իր մոտեցումները և զգալի ֆինանսական միջոցներ է պլանավորում հատկացնել բուհերի թվային ենթակառուցվածքների և թվային հմտությունների զարգացման համար:

Հիմնական եզրակացություններ

- ✓ Հայաստանի Կրթության մինչև 2030 թվականի ռազմավարությունը հիմնականում համապատասխանում է Ժամանակի հրամայականին և հետապնդում է այլ երկրների հետ նույնական ռազմավարական նպատակներ, սակայն առանձին դեպքերում առկա է ռազմավարական խզվածք նպատակների, միջոցների և թիրախների միջև:
- ✓ Սահմանափակ ռեսուրսների պայմաններում խիստ սևեռվածությունը առանձին նպատակի/ենթանպատակի վրա կարող է ստվերել մյուսների կարևորությունը և հանգեցնել ձախողման:
- ✓ Ամենայն հավանականությամբ, Նախագծի իրագործումը կպահանջի մի քանի միլիարդ դոլարի ներդրում, ինչը քիչ հավանական է 4 տարվա ընթացքում իրականացնել Հայաստանի պետական բյուջեի միջոցներով՝ թեկուզ ֆինանսավորում ներգրավելով միջազգային ֆինանսական հաստատություններից: Այլ կերպ ասած, մեր գնահատմամբ պետության ֆինանսական հնարավորությունները չեն համընկնում ցանկությունների հետ: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ մեզանախագծերի դեպքում ծախսերը հընթացս աճելու միտում ունեն:

Քաղաքականության առաջարկություններ

- ✓ Իրականացնել կրթության մինչև 2030 թվականը զարգացման ծրագրով նախատեսված գործողությունների ամբողջական ֆինանսական գնահատում՝ առաջնահերթություն տալով այն գործողություններին, որոնք ունեն ավելի բարձր ֆինանսական արդյունավետություն (financial efficiency) և ավելի մեծ ազդեցություն (impact) ընդհանուր նպատակների իրագործման վրա:
- ✓ Եթե որոշվի, որ Ակադեմիական քաղաքի ստեղծումը այդպիսի գործողություններից մեկն է, փոխել քաղաքի հայեցակարգը՝ այնտեղ ներառելով նաև տեխնոլոգիական ընկերությունների գրասենյակների կառուցում, տեխնոպարկերի կառուցում և այլն՝ բարձրացնելով մասնավոր ներդրողների հետաքրքրությունը նախագծի նկատմամբ:
- ✓ Նախագծի ֆինանսավորման համար ներդնել պետական-մասնավոր համագործակցության (PPP) մեխանիզմներ, ինչը թույլ կտա որոշակիորեն նվազեցնել ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքների կառուցման ֆինանսավորման ծախսերը:
- ✓ Մշակել առանձին ներդրումային նախագծեր, կազմակերպել roadshow-ներ աշխարհով մեկ՝ ներգրավելու խոշոր ներդրողների (օրինակ՝ տեխնոլոգիական ընկերությունների, որոնք կցանկանան իրենց հայաստանյան գրասենյակները տեղակայել Ակադեմիական քաղաքում):